ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2019 թվականի N 122

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի N 32 որոշման և Վանուշ Բարսեղյանի դիմումի՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1 փողոց N 49 հասցում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.1 հա հողամասի ընդլայնման համար ուղղակի վաճառքով Անահիտ Գրիշայի Գասպարյանին, Վահագն, Լուսինե և Լիլիթ Վեհասպետի Մանուկյաններին օտարվող 1-ին փողոց N 49/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության 0010-0023 ծածկագրի 0.03468 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր:
2. Վահագն Մանուկյանին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 430730 /չորս հարյուր երեսուն հազար յոթ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 6

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2019 թվականի N 123

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Անահիտ Գրիշայի Գասպարյանին, Վահագն, Լուսինե և Լիլիթ Վեհասպետի Մանուկյաններին սեփականության իրավունքով պատկանող 0010-0010 ծածկագրի (վկայական N 17072019-07-0086, 0.1 հա) և 0010-0023 ծածկագրի 0.03468 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել միասնական 1-ին փողոց N 49 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 6

գ. Նոր Արտամետ